ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Աջակցություն դատաիրավական բարեփոխումների իրականացմանը Հայաստանում

Իրականացման ժամանակահատված: 01.03.2023 - 28.02.2026

ԱԼԳ երկրներ:

Armenia

ԵՄ ներդրում: € 1 144 000

Ընդհանուր բյուջե: € 1 430 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

Council of Europe

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ: facebook.com/partnershipgovernance, https://twitter.com/CoeEapPCF

Նախագծի կայքէջ: partnership-governance-eu.coe.int/

Նախագծի նկարագրություն:

Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի իշխանություններին դատական համակարգի բարեփոխումների հետագա արդյունավետ իրականացման հարցում՝ ամրապնդելով վերջինիս անկախությունը, հաշվետվողականությունը եւ պրոֆեսիոնալիզմը: Այն նաև նպատակ ունի աջակցել Հայաստանի իշխանություններին ապահովելու քրեական արդարադատության նոր օրենսդրության արդյունավետ կիրառումը մարդու իրավունքների եվրոպական չափանիշներին համապատասխան:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի՝ «Գործընկերություն հանուն լավ կառավարման» համատեղ ծրագրի երրորդ փուլի շրջանակներում, որը տևելու է 2023 թվականից մինչև 2027 թվականը: Այն հիմնված է արդարադատության ամրապնդման ոլորտում «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի նախորդ փուլերի արդյունքների վրա (I փուլ՝ 2015-2018 թթ. և II փուլ՝ 2019-2023 թթ.):

Ակնկալվող արդյունքներ:

1. Ազգային իշխանությունների անհրաժեշտ կարողությունների և գործիքների ամրապնդում՝ 2022-2026 թվականների դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությունն իրականացնելու համար՝ համապատասխան եվրոպական չափանիշներին և լավագույն փորձին,
2. Ազգային իշխանությունների կողմից դատական անկախության, անկողմնակալության և հաշվետվողականության իրավական դաշտի և քաղաքականության համապատասխանեցում Եվրոպայի խորհրդի չափանիշներին,
3. Դատական ինքնակառավարման մարմինների և դատարանների կարողությունների ընդլայնում՝ պրոֆեսիոնալ, թափանցիկ և հաշվետու աշխատանքի համար,
4. Քրեական արդարադատության շահագրգիռ կողմերի կարողությունների ամրապնդում՝ ապահովելու քրեական արդարադատության նոր օրենսդրության արդյունավետ կիրառումը՝ համաձայնեցված քաղաքականության, ինստիտուցիոնալ և իրավական շրջանակների և իրականացման պրակտիկայի միջոցով: